ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հարգելի հավատացյալներ, խորին երախտագիտություն ենք հայտնում բոլորին, ովքեր ապրիլի 24-ին, 26-ին և մայիսի 10-ին մասնակցեցին, աջակցեցին Մեծ Եղեռնի 100 ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը:

Աստծո օրհնությունը Ձեզ և Ձեր ընտանիքներին...

Ռուսաստանի Հայ Կաթողիկե եկեղեցու
Փոխառաջնորդ, Մոսկվայի ժողովրդապետ
Հայր Պետրոս Ծ. Վրդ. Պետրոսյան

Մայիսի 24-ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունում տեղի կունենա սարկավագներ եղ. Անտոն (Զակքէոս) Գրիգորյանի և եղ. Գևորգ (Սարգիս) Սարգսյանի վարդապետական օծման արարողությունը: Մոսկվայից ուխտագնացության և վարդապետական օծման արարողությանը մասնակցելու կմեկնի 17 հոգուց կազմված խումբը՝ գլխավորությամբ հայր Պետրոս Ծ. Վրդ. Պետրոսյանի:

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի
Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
http:/armcatholik.ru

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՆՋԵԼՈ ԱՄԱՏՈՅԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔ

2015 թ. մայիսի 10-ը Մոսկվայի Հայ կաթողիկե համայնքի համար կրկնալի տոնական օր էր՝ Առաջին Հաղորդության արարողությանն էին պատրաստվում 18 պատանիներ և, որ ամենակարևորն է, առաջին անգամ Սրբություն պետք է ստանային Նորին Սրբություն Կարդինալ Անջելո Ամատոյի ձեռքից: Վերջինս Ռուսաստանում էր գտնվում մայիսի 9-ից:

Եվ ահա կիրակի օրը՝ մայիսի 10-ին Մոսկվայի Անարատ Հղության Կաթողիկե մայր տաճարում մատուցվեց ձայնավոր, Ս. Պատարագ՝ ձեռամբ Մոսկվայի ժողովրդապետ Հայր Պետրոս Ծ.Վրդ. Պետրոսյանի, համապատարագիչ Նորին սրբություն Կարդինալ Անջելո Ամատո: Պատարագին ներկա էին

Ռուսաստանում Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Բարձշն. Տ. Պաոլո արքեպիսկոպոս Պեցցին, Ռուսաստանում պապական նվիրակ Բարձշն. Տ. Իվան արքեպիսկոպոս Յուրկովիչը:

Հընթացս Սուրբ Պատարագի Կարդինալն իր խոսքում նշեց.

«Ամենասուրբ Մարիամը, ով դարեր շարունակ ուղեկցել է ձեզ՝ ձեր պատմական ուխտագնացության ընթացքում, շարունակում է պահպանել ձեր ժողովրդին և զորակցել աղոթքով և բարեխոսությամբ: Թող որ ձեր ժողովրդի յուրաքանչյուր մանկան սրտում հնչի նրա մայրական ձայնը և մեր քայլերն ուղղի բարու ճանապարհով: Թո՛ղ, որ Մարիամի քաղցր ժպիտը լուսավորի մեզ՝ փորձության ժամին և լինի փրկության փարոս՝ ճամփորդների համար»:

Այնուհետև օրհնեց և առաջին հաղորդություն մատուցեց 18 պատանիների և երեխաների:

Սուրբ պատարագից հետո տեղի ունցավ միջոցառում, որտեղ Նորին Սրբություն կարդինալը զեկուցում ընթերցեց՝ նվիրված Ս.Գրիգոր Նարեկացուն: Բազմազգ և բազմալեզու հանդիսատեսով լեցուն դահլիճը ջերմ ողջույններով ընդունեց Կարդինալի ելույթը, իսկ երեկոն շարունակվեց ևս մեկ դասախոսությամբ՝ նվիրված Մայր Հայաստանին:

«Հայաստանը աշխարհի քարտեզներում» զեկույցով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի պատվավոր դոկտոր քարտեզագետ Ռուբեն Գալիչյանը (Մեծ Բրիտանիա): Մեր թվարկությունից մինչ օրս Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ հայերեն և ռուսերեն լեզուներով ներկայացվող զեկուցումը մեծ ոգևորություն առաջացրեց ներկաների մեջ և ակտիվ քննարկման նյութ դարձավ:

Այնուհետև երեկոն շարունակվեց համերգային ծրագրով: Դասական երաժշտության, դուդուկի և ջութակի մեղեդիները հմայել էին ներկաներին:

Համերգից հետո Նորին Սրբություն կարդինալ Անջելո Ամատոն երախտագիտության խոսք հայտնեց բոլոր ներկաներին ջերմ ընդունելության համար և երեկոն ավարտվեց բարձրաստիճան հոգևորական հյուրերի հետ լուսանկարվելով:

Նյութը պատրաստեց Վ. Ասատրյանը

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գործք Առաքելոց 24, 1-23

24 Եւ հինգ օր յետոյ Անանիա քահանայապետը մի քանի ծերերի եւ
Տերտիւղոս անունով մի ճարտասան մարդու հետ իջաւ եկաւ: Սրանք
Պօղոսի մասին կուսակալին ներկայացրին իրենց ամբաստանութիւնը: [2]Եւ
երբ նրան կանչեցին, Տերտիւղոսն սկսեց ամբաստանել ու ասել. «Այս ազգը
բազում խաղաղութիւն է գտել քո շնորհիւ եւ գործերի կարգաւորութիւն՝ քո
խնամքի պատճառով:[3]Ամէն բանի համար եւ ամենուրեք քեզնից
շնորհակալ ենք, ո՛վ գերազանցդ Ֆելիքս, եւ մեծապես գոհ: [4]Բայց որպէսզի
աւելորդ յոգնութիւն չպատճառեմ քեզ, աղաչում եմ, որ քո
ներողամտութեամբ մեզ կարճիկարճոյ լսես: [5]Մենք գտանք, որ այս մարդը
ամբողջ աշխարհում գտնուող բոլոր հրեաների ապականողն ու
խռովեցնողն է եւ նազովրեցիների հերձուածի առաջնորդը: [6]Սա տաճարն
իսկ փորձեց պղծել. նրան բռնեցինք եւ ըստ մեր օրէնքի ուզեցինք
դատել: [7]Եկաւ Լիւսիաս հազարապետը ու մեծ բռնութեամբ մեր ձեռքից
յափշտակեց [8]եւ հրամայեց, որ նրան ամբաստանողներն էլ քեզ մօտ գան:
Նրան դու ինքդ կրկին դատելով կը կարողանաս վերահասու լինել այն
ամենին, ինչի համար մենք նրան ամբաստանում ենք»: [9]Հրեաներն էլ
համաձայն գտնուեցին ու ասացին՝ այդպէս է: [10]Երբ կուսակալը նրան գլխով
արեց, որ խօսի, Պօղոսը պատասխանեց. «Գիտեմ, որ շատ տարիներից ի
վեր դու այս ազգի կուսակալն ես, ուստի իմ խնդրի մասին յօժարութեամբ
պատասխան եմ տալիս. [11]ինչպէս որ կարող ես գիտենալ, տասներկու օրից
աւելի չէ, ինչ ես Երուսաղէմ եմ բարձրացել երկրպագութիւն անելու
համար: [12]Ինձ ո՛չ տաճարում են որեւէ մէկի հետ գտել խօսելիս եւ կամ
շուրջս բազմութիւն հաւաքելիս, ո՛չ ժողովարաններում եւ ո՛չ էլ
քաղաքում. [13]ո՛չ էլ կարող են քեզ այժմ ապացուցել այն, ինչի համար ինձ
ամբաստանում են: [14]Բայց այս խոստովանում եմ քեզ, թէ համաձայն այն
ճանապարհի, որը ասում են՝ հերձուած է, այնպէ՛ս եմ պաշտում իմ
հայրենի Աստծուն՝ հաւատալով այն ամենին, որ գրուած է Օրէնքում եւ
մարգարէների մէջ: [15]Յոյս ունեմ առ Աստուած, որ, ինչպէս դրանք էլ են
ակնկալում, յարութիւն է լինելու արդարների եւ մեղաւորների: [16]Դրա
համար ինքս էլ ճիգ եմ անում, որ Աստծու եւ մարդկանց առաջ միշտ
մաքուր խղճմտանք ունենամ: [17]Բազում տարիներից յետոյ եկայ օգնութիւն
անելու իմ ազգին եւ զոհեր մատուցեցի, [18]որոնցով սրբուած էի, երբ ինձ
գտան տաճարում, որտեղ ո՛չ բազմութեան հետ էի եւ ո՛չ էլ խռովարար
ամբոխի: [19]Այդ ասիացի հրեաներից ոմանք իրե՛նք պէտք է գային քո առաջ

եւ ամբաստանէին ինձ, եթէ իմ դէմ մի բան ունենային. [20]եւ կամ հէնց սրանք
թող ասեն, թէ ի՛նչ անիրաւութիւն են գտել իմ մէջ, մինչ ատեանի առաջ էի
կանգնած, [21]բացի միայն գուցէ իմ այն խօսքից, որ ասացի բարձրաձայն, երբ
նրանց մէջ կանգնել էի. «Մեռելների յարութեան համար է, որ ես այսօր
ձեզնից դատւում եմ»: [22]Ֆելիքսը նրանց գործը յետաձգեց, քանի որ աւելի
ստոյգ գիտէր այդ ճանապարհի մասին, եւ ասաց. «Մինչեւ Լիւսիաս
հազարապետը այստեղ իջնի, ձեր գործը կը յետաձգեմ»: [23]Եւ
հարիւրապետին հրամայեց նրան պահել, բայց որոշ չափով ազատ. եւ նրա
իւրայիններից ոչ ոքի չարգելել, որ նրան ծառայեն:

Հովհաննեսի Ավետարան 12, 12-23

[12]Յաջորդ օրը, ժողովրդի բազմութիւնը, որ զատկի տօնին էր եկել,
երբ լսեց, թէ Յիսուս Երուսաղէմ է գալիս,[13]արմաւենիների ճիւղեր վերցրեց
եւ Յիսուսին ընդառաջ ելաւ: Աղաղակում էին ու ասում. «Ովսաննա՜,
օրհնեա՛լ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով, ո՛վ թագաւոր
Իսրայէլի»: [14]Եւ Յիսուս մի էշ գտնելով, նստեց նրա վրայ, ինչպէս որ գրուած
է. [15]«Մի՛ վախեցիր, ո՛վ դուստրդ Սիոնի, ահա քո թագաւորը գալիս է՝
նստած մի էշի քուռակի վրայ»: [16]Եւ նրա աշակերտները սկզբում այն
չհասկացան, բայց երբ Յիսուս փառաւորուեց, այն ժամանակ յիշեցին, թէ
այդ նրա մասին էր գրուած, եւ իրենք այդ էին արել նրան: [17]Իսկ ժողովուրդը,
որ նրա հետ էր, վկայում էր, որ Ղազարոսին հէնց գերեզմանից կանչեց եւ
նրան մեռելներից կենդանացրեց: [18]Եւ դրա համար էլ նրան ընդառաջ ելաւ
ժողովուրդը, որովհետեւ լսել էին, որ այդ նշաններն էր արել: [19]Իսկ
փարիսեցիները միմեանց ասում էին. «Տեսնում էք, որ ոչ մի օգուտ չէք
ստանում. ահաւասիկ ամբողջ աշխարհը նրա յետեւից գնաց»: [20]Այնտեղ
կային նաեւ որոշ թուով հեթանոսներ՝ նրանց մէջ, որ Երուսաղէմ էին եկել,
որպէսզի տօնի ժամանակ երկրպագութիւն անեն: [21]Նրանք մօտեցան
Փիլիպպոսին, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքից էր. աղաչում էին նրան
ու ասում. «Տէ՛ր, ուզում ենք Յիսուսին տեսնել»: [22]Փիլիպպոսը եկաւ եւ
Անդրէասին ասաց: Անդրէասը եւ Փիլիպպոսն էլ Յիսուսին ասացին:[23]Եւ
Յիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «Հասաւ ժամը, որ փառաւորուի
մարդու Որդին:

ՀՀ Պաշտպանության Նախարարության կողմից նվեր հանձնվեց Ծ.Վրդ հայր Պետրոս Պետրոսյանին:

Պատարագից հետո, բարձրաստիճան հոգևորական կազմը և հավատացյալ հազարավոր բազմությունը հանդիսավոր երթով,

զանգերի թվով հարյուր զարկերի ներքո ուղղվեցին դեպի եկեղեցու բակում տեղադրված խաչքարը: Վերջինս տեղադրվել է Մեծ Եղեռնի հարյուրամյա տարելիցի կապակցությաբ՝ Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու բարերար Խաչատուր Աղաբաբյանի հովանավորչությամբ, քանդակագործ՝ Խաչատուր Դանիելյան:

Ամենապատիվ և գերերջանիկ հոգևոր տերն օծեց խաչքարը, որն այսուհետ ուխտատ եղի դարձավ Մոսկվայում և հարակից բնակավայրերում ապրող բոլոր հայ կաթողիկեների համար: Խաչքարի օծման և բացման արարողությունը ավարտվեց եկեղեցական խորհրդի պատվավոր անդամ դոկտոր Գևորգ Մովսեսյանի ելույթով, վերջինս ժողովրդապետ Հայր Պետրոս Ծ.Վրդ.Պետրոս Պետրոսյանի անունից իր երախտագիտության խոսքը հայտնց ՌԴ ղեկավարությանը Հայ ժողովրդին պաշտպանելու, ապահով կեցության և գործունեություն ծավալելու հնարավորությունների տրամադրման համար:

Ապա հավաքված ժողովուրդը հնարավորություն ունեցավ մոտենալ, մոմ վառել, և ծաղիկներ դներ հուշարձանին և աղոթել անմեղ նահատակների այժմ արդեն սուրբերի համար:

Ապրիլի 26-ի հիշատակի միջոցառումը ավարտվեց հանդիսավոր ճաշկերույթով:

Նյութը պատրաստեց Վարդուհի Ասատրյանը:

Երկրորդ՝ հայ տաղանդավոր նկարիչ-քանդակագործ Ֆրիդոն Ասլանյանը անակնկալով հանդես եկավ՝ ներկա գտնվող բարձրաստիճան հոգևորականներին նվիրելով իր ձեռքի կտավները, որոնք պատկերում էին Արևմտյան Հայաստանում գտնվող և թուրքական կողմից ոչնչացված կամ ոչնչացման եզրին գտնվող եկեղեցիներն ու վանքերը, ինչպես նաև Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի, Երանելի Մալոյանի և Ամենապատիվ Հոգևոր Տիրոջ Ներսես Պետրոս պատրիարքի, բարերար Խ.Աղաբաբյանի դիմանկարները: Իսկ Մոսկվայի հայ կաթողիկե համայնքին նվիրեց ապրիլի 12-ին Վատիկանում, Հռոմի պապ Ֆրանցիսկոս 1-ին Պապի կողմից տիեզերական եկեղեցու վարդապետ հռչակված ս.Գրիգոր Նարեկացուն պատկերող կտավը:

Ամենապատիվ Հոգևոր Տերն իր կողմից երախտագիտություն հայտնեց և հուշամեդալներով պարգևատրեց Ռուսաստանի Հայ Կաթողիկե եկեղեցու զարգացմանն աջակցող, ակտիվությամբ հանդես եկող հավատացյալներին՝ Բարերարներ Խ.Աղաբաբյանին, Ա. Յադոյանին, Ս. Բախչինյանին, Մ. Օքրոյանին, Եկեղեցական Խորհրդի պատվավոր անդամ Ա. Ղազարյանին, գլխավոր խորհրդատու Պ. Ակոպովին, խորհրդի անդամներ Է.Էթմեքչյանին, Հ.Ամիրխանյանին, Հ.Արթինյանին, Երանելի Մալոյանի անվան եկեղեցական երգչախմբի խմբավար Մ.Բաղնիքյանին, խորհրդի քարտուղար և ծրագրերի կազմակերպիչ Վ.Ասատրյանին, Երիտասարդաց միության նախագահ Մ. Մովսեսյանին:

Ապրիլի 26-ի Մոսկվա քաղաքում Սուրբ Պատարագին Ամենապատիվ և Գերերջանիկ Տեր Ներսես Պետրոս ԺԹ Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս Պատրիարքի քարոզը

Նորին սրբություն Կիրիլ Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսիոյ,
Ռուսաստանում պապական նվիրակ Բարձրաշնորհ Տ. Իվան արքեպս. Յուրկովիչ,
Ռուսաստանում Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Պաոլո արքեպիսկոպոս Պեցի
Արհիապատիվ Տեր Ռաֆայել Արքեպիսկոպոս Մինասյան՝ առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի Առաջնորդության,
Գերաշնորհ Սրբազան Եզրաս, Առաջնորդ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայ Առաքելական եկեղեցու,
Գերապայծառ, Գերհարգելի և Գերապատիվ հայրեր, Առաքինազարդ քույրեր,
Արժանապատիվ Հայրեր և Սարակավագներ,
Հայոց Ցեղասպանության հարազատ հայորդիներ,
Մեծարգո պետական այրեր և զանազան կազմակերպությունների, մամուլի ներկայացուցիչներ,
Հույժ սիրելի հավատացյալներ:

Այսօր Հինանց շրջանի Դ կիրակին է, որի ընթացքում կարդում ենք Առաքյալների Գործերից, որտեղ ներկայացվում է, թե ինչպես առաջին քրիստոնյա հասարակությունը կազմակերպվում է Հիսուս Քրիստոսի Հարությամբ: Դա մի իրողություն էր, որը մարդկանց դեպի հավատքն ու մկրտությունն է դարձնում: Առաքյալների քարոզչությունը և մարդկանց դարձը դեպի Քրիստոս ընդդիմության և հալածանքի է հանդիպում հրաների կողմից, որոնք գործում էին նախանձից դրդված: Սակայն ի հակադրություն դրա Պողոսն ու Բարնաբասը ավելի համարձակությամբ էին հայտարարում Հիսուսի Հարության մասին և Աստծո խոսքը

լսողների թիվն աճում էր: Այսպես ձևավորվեց քրիստոնյա Եկեղեցին Հրեաստանում, Հայաստանում, Ռուսաստանում և այլ երկրներում, որոնք սրբեր, մարտիրոսներ և բազմաթիվ հավատացյալներ տվեցին Քրիստոսի եկեղեցուն և դարեր ի վեր վկայեցին Հիսուսի Փառավոր Հարությունը:

Այսօր Հայ ժողովուրդը հիշատակում է մեկ ու կես միլիոն նահատակների հիշատակի հարյուրամյակը: Նահատակներ, որոնք աննախադեպ անմարդկային չարչարանքների ենթարկվեցին՝ անկախ տարիքից ու սեռից, թալանվեցին ու սպանվեցին, մեծ ու մանուկ, այր ու կին: Եկեղեցիները, վանքերն ու տները թալանվեցին ու ավիրվեցին Օսմանյան կառավարության պետական ծրագրով: Հայ ժողովուրդը բնաջնջվում էր, որովհետև քրիստոնյա էր: Սակայն նրանց գազանաբարո ծրագիրը ձախողվեց և այսօր մենք կանք՝ վկայելու համար Հիսուս Քրիստոսի սուրբ Հարությունը: Սուրբ Ավետարանի խոսքն այսօր ասում է. *«[25]Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ կը գայ ժամանակ, եւ արդէն իսկ եկել է, երբ մեռելները կը լսեն Աստծու Որդու ձայնը, եւ նրանք, որ կը լսեն, կ՚ապրեն» Հովհ. Ավետարան 5, 25:* Այո, սիրելիներ, մեր բյուրավոր նահատակների ժառանգորդներ, մեր նահատակներն ապրում են, նրանք մահվան մեջ չեն, այլ Հիսուսի արդարների հետ վայելում են Քրիստոսի Հարությունը հավիտենական կյանքի մեջ, որտեղ ոչ ցավ և ոչ մահ կա, այլ միայն հավիտենական երջանկություն: Նրանք հավատարիմ մնացին Լուսավորչական հավատքին և իրենց կյանքի զոհաբերումով մեզ անմոռանալի վկայություն տվեցին: Հետևելով իրենց օրինակին՝ կգա մի օր, որ մենք կմիանանք մեր սուրբերին, Սուրբ Մարիամի հովանու ներքո: Նույնիսկ մեղավորները կոչված են հավիտենական կյանքի, եթե մեր նահատակների նման հավատան Հիսուս Քրիստոսի Հարությանը: Ինչպես որ փառավոր կերպով ներկայացրել է Տիեզերական եկեղեցու նորանվանյալ վարդապետ, մեր շատ սիրելի

Սուրբ պատարագի ավարտին հայ ժողովրդին ցավակցության և Ցեղասպանությունը դատապարտող խոսքերով հանդես եկան քույր եկեղեցիների ներկայացուցիչները:

Այնուհետև, Տեղի ունեցան պարգևատրության և նվերների հանձնման արարողություններ:

Առաջին հերթին՝ Ցեղասպանության հարյուրամյա տարելիցին նվիրված միջոցառումների Համառուսական հանձնաժողովի կողմից Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի սոցիալական և քաղաքական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Զախարովը «Ի հիշատակ Հայոց Ցեղասպանության հարյուրամյակի» հուշամեդալներ հանձնեց Գերերջանիկ պատրիարք Տեր Ներսես Պետրոս ԺԹ-ին, արքեպիսկոպոս Ռաֆայել Մինասյանին, Վատիկանի նունցիա արքեպիսկոպոս Իվան Յուրկովիչին, կաթողիկե եկեղեցու արքեպիսկոպոս Պաոլո Պեցիին,Ռուսաստանում հայ Կաթողիկե եկեղեցու եպիսկոպոսի տեղապահ Ծ.Վրդ. հայր Պետրոս Պետրոսյանին, Մոսկվայի Հայ Կաթողիկե եկեղեցական խորհրդի պատվավոր անդամ, Ռուսաստանի Դիվանագետների ասոցիացիայի նախագահ Պողոս Ակոպովին և Հայ Կաթողիկե եկեղեցու բարերար Խաչատուր Աղաբաբյանին, ևս մեկ հուշամեդալ նախատեսված էր Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի համար:

Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին 1915-2015թթ.

Սուրբ Պատարագ և Խաչքարի օծում Մոսկվայի Կաթողիկե Մայր տաճարում Մոսկվա Ապրիլի 26 2015թ.

Սույն թվականի ապրիլի 26-ին Մոսկվայի Անարատ Հղության Կաթողիկե Մայր տաճարում տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն: Օսմանյան կայսրությունում Հայոց Ցեղասպանության հարյուրամյա տարելիցին նվիրված կիրակնօրյա սուրբ Պատարագը մատուցվեց ձեռք Ամենապատիվ և Գերերջանիկ Տեր Ներսես Պետրոս ԺԹ Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց: Սա Հոգեւոր Տիրոջ առաջին այցն էր Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնք եւ առաջին Սբ. Պատարագը ռուսաստանաբնակ հայ կաթողիկէների համար:

Սբ. Պատարագին ներկա էին՝

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի Հայ Կաթողիկեների առաջնորդ Բարձշն. Տ. Ռաֆայել արքեպս. Մինասյանը, ում ուղեկցում էր թեմի առաջնորդական փոխանորդ Գերի. Հ. Մեսրոպ թ.ծ.վրդ. Միլահեանը,

Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարքի տեղեպահ Բարձշ. Տ. Սավվա եպս. Վոսկրեսենսկին,

Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը,

Ռուսաստանում Կաթողիկե Եկեղեցու լատինածես համայնքի առաջնորդ Բարձշն. Տ. Պաուլո արքեպս. Պեցին,

Ռուսաստանում պապական նվիրակ Բարձշ. Տ. Իվան արքեպս. Յուրկովիչը,

Հռոմի Լևոնյան վարժարանի ռեկտոր Գերի. Հ. Գևորգ թ.ծ.վրդ. Նորատունկյանը,

Ռուսաստանի հայ կաթողիկէ համայնքների ժողովրդապետները (Մոսկվայի ժողովրդապետն է Գերի. Հ. Պետրոս ծ.վրդ. Պետրոսյանը),

Ռուսաստանի, ՀՀ պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, հասարակական և մշակույթի գործիչներ, հարյուրավոր հայ կաթողիկե հավատացյալներ:

և գնահատելի Ս.Գրիգոր Նարեկացին, որն այդ տիտղոսին արժանացավ Ապրիլի 12-ին Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի կողմից:

Սրբազան Պապը 1915 թվականի Ցեղասպանությունը ճանաչեց և Թուրքիայի կառավարությանը խնդրեց, որ ընդունի այս պատմական իրողությունը, որովհետև՝ *«վերքը, որ դարման չի գտնում, շարունակում է արնահոսել նույնիսկ հարյուր տարի հետո»*, - հայտարարեց պապը հարյուրավոր երկրների ներկայացուցիչների և բյուրավոր հայազգի բազմության առջև՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին 2-ի և Արամ Ա Վեհափառի: Սրբազան Պապի խոսքը ցնցեց Ամբողջ աշխարհը, մանավանդ, երբ նա ասաց, թե անարդարության առաջ լուռ մնացող պետությունները մեղսակից են դառնում տեղի ունեցածին:

Որպես հայ և քրիստոնեա՝ մեզ մնում է հիշատակել մեկ ու կես միլիոն նահատակների հերոսական վկայությունը, նրանց արժանավոր ժառանգորդները լինել մեր կյանքի վկայությամբ՝ հավատարիմ մնալով Լուսավորչական հավատքին և կրկնելով Սուրբ Գրիգոր Նարեկացու Աղոթքի Մատյանը:

Խոսքս եզրափակում եմ քույր եկեղեցիներին քրիստոնեական ողջույնով՝ ասելով Քրիստոս յարեավ ի մեռելոց: Ինչպես մեր հայրերին՝ մեզ նույնպես պետք է շնորհվի Սուրբ Հարություն:

Քրիստոս յարեավ ի մեռելոց...

Քրիստոս վասկրես...

Ամենապատիվ և Գերերջանիկ Տեր Ներսես Պետրոս ԺԹ Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց պատրիարք կաթողիկոսի այցելությունը Ռուսաստանի Դաշնություն

1. Ապրիլի 24 –ին Ժամանում
2. Ապրիլի 25-ին հանդիպում Ռուսաստանում Կաթողիկե եկեղեցու արքեպիսկոպոս Պաոլո Պեցիի հետ: Հանդիպում Մոսկվայի համայնքի ներկայացուցիչների հետ:
3. Ապրիլի 26-ին փառավոր ձայնավոր Սբ.Պատարագ՝ նվիրված Օսմանյան կայսրությունում Հայոց Ցեղասպանության հարյուրամյա տարելիցին: Խաչքարի օծում:
4. Ապրիլի 27-ին Այցելություն Վենյով քաղաք (Ժողովրդապետ Հայր Սեդրակ վարդապետ Խիթարյան), հանդիպում տեղի հայ կաթողիկե համայնքի հետ, Սուրբ Պատարագի մատուցում Ամենապատիվ Հոգևոր Տիրոջ կողմից: Մասնակցություն միջոցառման՝ կազմակերպված տեղի հայ համայնքի 40 երեխաների կողմից:
5. Ապրիլի 28-ին այցելություն Սոչի քաղաք, Մեկ մկրտություն, Սուրբ Պատարագ Հոգևոր Տիրոջ մատուցմամբ, հանդիպում Կրասնոդարի երկրամասի բոլոր քաղաքներից ժամանած հայ համայնքի ներկայացուցիչների հետ:
6. Ապրիլին 29-ին Ժամը 12:30 Հանդիպում Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ Մոսկվայի Հայ Առաքելական եկեղեցում
7. Ապրիլի 30 Հանդիպում Ռուսաստանի Դաշնությունում Վատիկանի նունցիա արքեպիսկոպոս Իվան Յուրկովիչի հետ վերջինիս նստավայրում:
8. Մայիսի 1-ին մեկնում

Ապրիլի 29-ին Գերերջանիկ Տեր Ներսես Պետրոս պատրիարքին ընդունեց Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրարք Կիրիլը

Հայ կաթողիկե և Ռուս եկեղեցու հոգևոր տերերը դատապարտեցին ցեղասպանություն երևույթը բոլոր ժամանակներում և քննարկեցին համայն աշխարհում քրիստոնեաների դրությունը, հատկապես նշելով Մերձավոր Արևելքում տեղի ունեցող բռնությունները և քրիստոնեաների հանդեպ ոտնձգությունները:

Հոգևոր հայրերը նշեցին, որ հայ կաթողիկե և ռուս եկեղեցիների միջև բարի դրացիական, եղբայրական հարաբերություններ են, որոնք պետք է առավել ամրանան հատկապես եղբայրասպան պատերազմները և արյունահեղությունները կանխարգելելու նպատակով: Փոխադարձ բարեմաղթանքներ փոխանակեցին և հանուն Քրիստոսի միասնական եկեղեցու համագործակցելու մտքեր փոխանակեցին:

http://www.patriarchia.ru/